

Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
2015 թվականի հունվարի 29-ին
Պետական գրանցման համարը 3001519



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 հունվարի 2015թ.

N 6 -Ն

ք.Ստեփանակերտ

ՀԱՄԱՊԵՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ
ՀԱՄԱՐ ԸՆՏՐՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿԻՑ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄԻ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԱՅՐԻ
ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻՑ ԸՆՏՐՈՂԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԸՍՏ
ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՏԵՂԱՄԱՍԻ ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑԱԿՈՒՄ
ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի N 82/297-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8-րդ հոդվածի 3-րդ մասին և
«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին
համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական
հանձնաժողովը **որոշում է.**

1.Սահմանել՝

1) համապետական ընտրությունների դեպքում քվեարկությանը մասնակցելու համար ընտրողի
վերաբերյալ տվյալներն ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես
հանելու մասին դիմումի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ընտրողի տվյալները ժամանակավորապես
հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում
ընդգրկելու վերաբերյալ տեղեկանքի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2010 թվականի մարտի 2-ի «Համապետական ընտրությունների դեպքում քվեարկությանը մասնակցելու համար քաղաքացու վերաբերյալ տվյալներն ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես հանելու մասին դիմումի և հաշվառման վայրի ընտրողների ցուցակից քաղաքացու տվյալները ժամանակավորապես հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու վերաբերյալ տեղեկանքի ձևերը սահմանելու մասին» N 82/297-Ն որոշումը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Ս. ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

նշվում է լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման անվանումը

ԴԻՄՈՒՄ

_____ 20 թ. _____ -ի
նշվում է <Հանրապետության Նախագահի> կամ <ԼՂՀ Ազգային ժողովի> բառերը

ընտրությունների քվեարկությանը մասնակցելու համար խնդրում եմ իմ վերաբերյալ
տվյալները ժամանակավորապես հանել _____

նշվում է շրջանի, համայնքի անվանումը, հաշվառման վայրի հասցեն

ընտրողների ցուցակից և ընդգրկել քվեարկության օրն ըստ գտնվելու վայրի ընտրական
տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում:

Քվարկության օրը գտնվելու եմ _____

նշվում է քվեարկության օրը գտնվելու շրջանը, համայնքը և հասցեն

Դիմող՝ _____

ազգանուն,անուն, հայրանուն

ստորագրություն

_____ 20թ.

Դիմումը կարող է ներկայացվել քվեարկության օրվանից մինչև 7 օր առաջ: Ընտրողը
դիմումը ներկայացնում է անձամբ՝ իր հետ ունենալով անձը հաստատող փաստաթուղթ
(անձնագիր):

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների
դեպքում սույն դիմումը հնարավորություն է ընձեռում ըստ գտնվելու վայրի մասնակցելու
միայն Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին:

Դիմումի ձևը տրամադրվում է լիազոր մարմնի կամ նրա համապատասխան
ստորաբաժանման կողմից:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**Հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ընտրողի տվյալները
ժամանակավորապես հանելու և ըստ գտնվելու վայրի ընտրական
տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակում
ընդգրկելու վերաբերյալ**

Քաղ. _____ -ի

ազգանուն , անուն, հայրանուն

Ծննդյան ամսաթիվ, ամիս, տարեթիվ _____

Անձնագիր _____

սերիա, համար, ում կողմից է տրված

Հաշվառված _____

նշվում է շրջանի, համայնքի անվանումը, հաշվառման վայրի հասցեն

վերաբերյալ տվյալները ժամանակավորապես հանվել են

նշվում է շրջանի, համայնքի անվանումը և հաշվառման վայրի հասցեն, իսկ քվեարկության օրվանից 40-ից մինչև 7 օր առաջ
ընկած ժամանակահատվածում՝ նաև ընտրական տեղամասի համարը

ընտրողների ցուցակից և ընդգրկվել _____ շրջանի _____ համայնքի,

_____ հասցեի, թիվ _____ ընտրական տեղամասի (ընտրական
տեղամասի համարը նշվում է քվեարկության օրվանից 40-ից մինչև 7 օր առաջ ընկած ժամանակահատվածում ստացված
դիմումների դեպքում) ընտրողների ցուցակում:

_____ լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման
ղեկավարի անուն, ազգանուն

_____ ստորագրություն

Կ.Տ.

_____ 20 թ.

Տեղեկանքը տրվում է միայն համապետական ընտրությունների դեպքում:
Քվեարկությանը մասնակցելու համար ընտրողը տեղեկանքը, անձը հաստատող
փաստաթղթի հետ միասին, քվեարկության օրը ներկայացնում է համապատասխան
տեղամասային ընտրական հանձնաժողով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների
դեպքում սույն տեղեկանքը հնարավորություն է ընձեռում ըստ գտնվելու վայրի
մասնակցելու միայն Ազգային ժողովի համամասնական ընտրակարգով ընտրություններին:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ